

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 47/1

27 սեպտեմբերի 2013 թ.

Քննարկվեց «ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ» ՍՊԸ 17.07.2013 թ-ի բողոքը «ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.05.2013 թ-ի թիվ 2101422 ստուգման ակտի դեմ:

Սույն բողոքը քննության է առնվել «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև Հանձնաժողով) 12.08.2013 թ-ի նիստում: Արդյունքում ընդունվել է թիվ 39/1 որոշումը, որի համաձայն «ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ» ՍՊԸ 17.07.2013 թ-ի բողոքի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի 2013 թ-ի ապրիլի 25 թիվ 2101422 հանձնարարագրի «ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը «Օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է «ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.05.2013 թ-ի թիվ 2101422 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով եկամտային հարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 29.400.000 դրամ:

«ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

Ստուգման ակտով նախատեսվում է առաջադրել 29.400.000 դրամի չափով եկամտային հարկ՝ թվով 49 չձևակերպված վարձու աշխատողի համար, որի կապակցությամբ ընկերությունը ունի հետևյալ առարկությունները:

ա/ չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը որոշելիս հարկային տեսչության աշխատողները հիմք են ընդունել միայն ընկերության մարդկային ռեսուրսների փաստաթղթային ստորաբաժանման ղեկավար Հասմիկ Մխիթարյանի հայտարարությունը, որն բավարար չէ եզրահանգումներ կատարելու համար.

բ/ հարկային տեսուչները անտեսել են կազմակերպության ղեկավարի մոտ գտնվող 2013 թ-ի ապրիլի 2-ի ամսաթվով կնքված պայմանագրերը, դեռ ավելին՝ հրաժարվել են ծանոթանալ այդ պայմանագրերին (պայմանագրերի պատճենները ներկայացվել են ակտի նախագծի վերաբերյալ ՀՏ ներկայացված առարկության հետ):

Այսպիսով, քանի որ վարձու աշխատողների աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանի վարման օրենսդրական պահանջը վերացել է դեռևս 2010 թվականի դեկտեմբերին, ապա ընկերությունը կարծում է, որ հարկային մարմինների համար պատշաճ ապացույցներ (աշխատողի վարձու աշխատանքի ընդունումը «Օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության հարցում) կարող են հանդիսանալ աշխատանքային պայմանագրերը և աշխատողների աշխատանքի ընդունման հայտերը, որոնք ընկերության կողմից ներկայացվել են օրենքով սահմանված ժամկետում:

Ընկերության կողմից ներկայացվել է նաև 2013 թ-ի ապրիլ ամսվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկը, որում եկամտային հարկի գումարը ենթադրյալ չձևակերպված վարձու աշխատողների համար կազմել է 896.633 դրամ:

Ընկերությունը խնդրում է հաշվի առնել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, հարկային տեսուչների բերված փաստերը չձևակերպված վարձու աշխատողների մասով համարել անբավարար՝ ապացույցների բացակայության պատճառով:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

համադրելով <ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ> ՍՊԸ-ում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված անձանց, 02.04.2013 թ-ին <Արզնի գրուպ> և <ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ> ՍՊ ընկերությունների միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագիրը, ընկերությունում առկա աշխատանքային պայմանագրերը (հրամանները) և հիմք ընդունելով ընկերության մարդկային ռեսուրսների փաստաթղթային ձևակերպումների ստորաբաժանման ղեկավար Հասմիկ Մխիթարյանի հայտարարությունը պարզվեց, որ ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված վարձու աշխատողներից՝ թվով 49 (քառասունինը) աշխատակցի (աշխատակիցների ցանկը կցվում է ակտի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածում) աշխատանքի ընդունումը << օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէր, բացակայում էին գրավոր աշխատանքային պայմանագրերը, աշխատանքի ընդունման իրավական ակտերը կամ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանները:

Խսխտվել է << <Աշխատանքային օրենսգրքի> 14-րդ հոդվածի պահանջները: Համաձայն <Եկամտային հարկի մասին> << օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի, աշխատողի աշխատանքի ընդունումը << օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստը լիազոր մարմնի կողմից արձանագրվելու դեպքում գործատուն տվյալ (արձանագրման) ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է եկամտային հարկ՝ 600.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակն ավել է իննից ( $49 \cdot 600.000 = 29400000$ ):

Քննարկման ընթացքում նշվեց, որ ստուգման ընթացքում ստուգումն իրականացնող պաշտնատար անձանց կողմից համադրվել են <ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ> ՍՊԸ-ում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված անձանց, 02.04.2013 թ-ին <Արզնի գրուպ> և <ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ> ՍՊ ընկերությունների միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև ընկերությունում առկա աշխատանքային պայմանագրերը (հրամանները): Համադրման արդյունքում, ինչպես նաև հիմք ընդունելով ընկերության մարդկային ռեսուրսների փաստաթղթային ձևակերպումների ստորաբաժանման ղեկավար Հասմիկ Մխիթարյանի հայտարարությունը պարզվել է, որ ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված վարձու աշխատողներից՝ թվով 49 (քառասունինը) աշխատակցի աշխատանքի ընդունումը << օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէ, մասնավորապես՝ բացակայում են գրավոր աշխատանքային պայմանագրերը, աշխատանքի ընդունման իրավական ակտերը կամ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանները: Ընդ որում հարկ է նշել, որ ընկերության աշխատակիցների աշխատանքի ընդունման և ազատման գործընթացները կարգավորվում են մարդկային ռեսուրսների փաստաթղթային ձևակերպումների ստորաբաժանման կողմից, հետևապես վերջինիս ղեկավարի կողմից տրված հայտարարությունը և տրամադրված տեղեկատվությունը համարվում են հավաստի և կարող են հիմք հանդիսանալ ստուգումն իրականացնող պաշտնատար անձանց կողմից համապատասխան հետևություններ անելու համար:

Բացի այդ, ինչպես որ վերը նշվել է, սույն գործը քննության է առնվել Հանձնաժողովի 12.08.2013 թ-ի նիստում, որի ժամանակ հիմք ընդունելով << ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում ընկերության գործունեության վերաբերյալ նյութերը ընդունվել է թիվ 39/1 որոշումը՝ ընկերության 17.07.2013 թ-ի բողոքի հիման վրա << ԿԱ ՊԵԿ-ում հարուցված վարչական վարույթը կասեցնելու մասին: Հետաքննության ընթացքում ստուգմամբ հայտնաբերված չձևակերպված աշխատակիցները տվել են բացատրություններ, որոնցով ևս

հիմնավորվում է ստուգման ակտով արձանագրված խախտումն կատարված լինելու հանգամանքը:

Հանձնաժողովի նիստերի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որով որոշվել է Հանձնաժողովի 12.08.2013 թ-ի թիվ 39/1 որոշմամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում կասեցված վարչական վարույթը վերսկսել, իսկ ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը, գանգատը և դրան առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ:

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 12.08.2013 թ-ի թիվ 39/1 որոշմամբ «ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ» ՍՊԸ 17.07.2013 թ-ի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում կասեցված վարչական վարույթը վերսկսել:

2. Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ